

պէս աստուածազան Առաքեալն ուսուցանէ ասելով. “Իսկ յորժամ՝ եկն լրումն ժամանակի, արտաքս առաքեաց Աստուած զՈրդին իւր եղեալ ի կնոջէ,,. եւ զոլ զնոյն Աստուած եւ Որդի Աստուծոյ ըստ հոգւոյ (κατὰ πνεῦμα <sup>1</sup>) իսկ Որդի մարդոյ ըստ մարմնոյ. ոչ երկուս ընութիւնս՝ զմին երկրպագելի եւ զմին աներկրպագելի, այլ մի ընութիւն Աստուծոյ Բանին մարմնացեալ եւ երկրպագեալ հանդերձ մարմնով իւրով միով երկրպագութեամբ<sup>2</sup>: Այլ եւ ոչ երկուս Որդիս՝ այլ ոմն Որդի Աստուծոյ ճշմարիտ եւ երկրպագեալ, իսկ այլ ոմն ի Մարիամայ մարդ ոչ երկրպագեալ, որպէս եւ մարդիկ. այլ զի յԱստուծոյն եւ Աստուած, որպէս ասացի մի Որդի Աստուծոյ եւ Աստուած զնոյն եւ ոչ զայլս (գոռօցի՛ զայլն), եւ ի Մարիամայ ծնեալ ըստ մարմնոյ առ վերջնովք աւուրբքս, որպէս հրեշտակն Աստուածածնին Մարիամայ յասելն՝ “Ի՞նչը եղիցի ինձ այս, զի զայր ոչ զիտեմ,, ասէր. “Հոգին սուրբ եկեացէ՛ առ քեզ եւ կարողութիւն Բարձրելոյն հովանացի քեզ. վասն զի ծնեալն Սուրբ կոչեացի եւ Որդի Աստուծոյ,,:

“Ծնեալն սուրբ կոչեացի եւ Որդի Աստուծոյ այսուհետեւ ի Կուսէն Մարիամայ՝ Որդի Աստուծոյ ընութեամբ եւ Աստուած ճշմարիտ եւ ոչ շնորհիւ եւ կցորդութեամբ, ըստ մարմնոյ միայն ի Մարիամայ մարդ, իսկ ըստ հոգւոյն՝ ինքն Որդի Աստուծոյ եւ Աստուած. կրեալ զմեր կիրս՝ որպէս զրեալ է. “Բրիստոսի կրեցելոյ վասն մեր մարմնով,,. եւ դարձեալ՝ “Որ իւր Որդւոյն ոչ ինայեաց, այլ վասն մեր ամենեցուն ետ զնա,,. իսկ անկիր մնացեալ եւ անայլայլակ ըստ աստուածութեանն՝ ըստ ասացելումս ի մարգարէէն. “Ես եմ՝ Աստուած եւ ոչ այլայլիմ,,: Մեռանելով զմերն մահ ըստ մարմնոյ վասն մեղաց, զի զմահն խողխողեաց ի ձեռն վասն մեր մահուան ըստ ասողի Առաքելոյն. “Ընկղմեցաւ մահ յաղթութիւն քո. ո՛ր մահ խայթոց քո,,: Եւ դարձեալ՝ “Բրիստոս մեռաւ վասն մեղաց մերոց ըստ զրելոյն,,: Անըմբոնելի իսկ եւ անմահ մահուամբ մնացեալ յաղագս աստուածութեանն ըստ ասողին Պետրոսի. “Ոչ էր, ասէ, կար ըմբոնել նմա ի մահուանէ,, վերագնացեալ յերկինս եւ նստեալ ընդ աջմէ Հօր յերկրէ քարձրացեալ մարմին բանին ըստ ասելոյն Գալթայ. “Ասաց Տէր Տեսուն իմում՝. Եիստ յաջմէ իմմէ,,. եւ ի նմանէ ի Տեսունէ հաստատեալ եւ յառաքելոցն. իսկ ըստ աստուածութեանն պարունակելով ընդ Հօր ի յաիտենից յաւետակից որպէս հայրական

<sup>1</sup> Ս. Ըթանասի յատուկ է աս բացարութիւնը, փոխանակ բտելու՝ “ըստ աստուածութեան,,:

<sup>2</sup> Ըստ այսմ Ըթանաս նսել. “Վասն մարմնաւորութեան Բանին,, զբքին մէջ. Ομολογοῦμεν καὶ εἶναι αὐτὸν Υἱὸν τοῦ

Θεοῦ καὶ Θεὸν κατὰ πνεῦμα, Υἱὸν ἀνθρώπου κατὰ σάρκα. Οὐ δύο φύσεις τὸν εἶνα Υἱὸν, μίαν προσωνυμίαν, καὶ μίαν ἀπροσωνυμίαν, ἀλλὰ μίαν φύσιν τοῦ Θεοῦ Λόγον οὐσαρκωμένον, καὶ προσωνυμιόενον μετὰ τῆς σαρκὸς αὐτοῦ μίᾳ προσωνυμίᾳ.